ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՍԱՐԱՆԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿԱՅՔԵՐԻ ԱՐԳԵԼԱՓԱԿՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՆԱԽԱԲԱՆ

Լեռնային Ղարաբաղում 44-օրյա պատերազմի ժամանակ (2020թ. սեպտեմբերի 27 - նոյեմբերի 9) և հետպատերազմյան ամիսներին ադրբեջանական առցանց լրատվամիջոցներն անհասանելի էին հայկական լսարանի համար: Սա դարձավ և՛ պատերազմի առաջին օրվանից Հայաստանում հայտարարված ռազմական դրության տարր, և՛ ադրբեջանական կողմի միջոց՝ հայ հաքերների հնարավոր Ddos հարձակումները կանխելու համար: Թեև ռազմական դրության ռեժիմը նախատեսում է տեղեկատվության տարածման և ստացման որոշակի սահմանափակումներ, սակայն կայքերի արգելափակումը մի շարք միջազգային և տեղական հայկական կազմակերպություններ գնահատել են որպես իրենց հետ անմիջականորեն առնչվող փաստերի և կենսական նշանակություն ունեցող իրադարձությունների մասին տեղեկություններ ստանալու՝ լսարանի իրավունքների խախտում:

Այս ուսումնասիրության նպատակն էր բացահայտել ադրբեջանական ինտերնետային կայքերի արգելափակման հնարավոր հետևանքները հայկական լրատվամիջոցների լսարանի համար: Այդ նպատակով Երևանի մամուլի ակումբի մշտադիտարկման խումբը, օգտագործելով VPN/TOR գործիքները, կատարել է հինգ ադրբեջանական (vesti.az, media.az, day.az, report.az, trend.az) և նույնքան էլ հայկական (news .am, aravot.am, lragir.am, 1lurer.am, tert.am) լրատվական ինտերնետ ռեսուրսների բովանդակության համեմատական ուսումնասիրություն:

Փորձագետների հարցման միջոցով իրականացվող հետազոտության համար ընտրվել է 7 թեմա, որոնք առանձնահատուկ կարևորություն և հետաքրքրություն են ներկայացնում հայկական լսարանի համար. 1. Ռազմական գործողությունների ընթացքը, 2. Լեռնային Ղարաբաղի շուրջ դիվանագիտական գործընթացը (հայտարարություններ, անդրադարձ խնդրի կարգավորման ձևաչափին և դրա լուծման հնարավորություններին), 3. Ռազմագերիների և պահվող այլ անձանց վերաբերող հարցեր, 4. Տրանսպորտային հաղորդակցությունների բացման հեռանկարները, 5. Խաղաղապահների գործունեությունը և նրանց կարգավիճակը, 6. Արտաքին ուժերի ներգրավվածությունն ու դերը, վարձկանների թեման, 7. Լարվածություն և բախումներ սահմանային գոտում:

Մշտադիտարկման մեթոդաբանությունը ենթադրում էր ուսումնասիրված ադրբեջանական աղբյուրներում վերը թվարկված թեմաներով հրապարակումների արձանագրում՝ հայկական հինգ լրատվամիջոցներում դրանց համապատասխանող իրադարձությունների և փաստերի արտացոլման հետագա համեմատությամբ: Հետազոտության քանակական բաղադրիչը ներառում էր ադրբեջանական և հայկական աղբյուրներում միևնույն իրադարձությունների և փաստերի նկատմամբ անդրադարձների համընկնումների (տարբերակումների) հաշվարկը: Խառը քանակական և որակական բաղադրիչ, որը նախատեսված է ինչպես մեկ կամ մի քանի ադրբեջանական, այնպես էլ մեկ կամ մի քանի հայկական ռեսուրսներում արձանագրված իրադարձությունների և փաստերի մեկնաբանությունների համեմատության (համընկնման կամ տարաձայնության) համար: Միևնույն ժամանակ, մեկնաբանություն ասելով նկատի է առնվում «մերկ փաստերի» օգտագործումը, այլ ոչ թե դրանց վերաբերյալ գնահատականներն ու կարծիքները:

Որակական բաղադրիչը ներառում էր կոնկրետ օրինակների ուսումնասիրություններ և մշտադիտարկման արդյունքներից բխող ընդհանուր եզրակացություններ։

Դիտարկումների համար ընտրվել են ժամանակային երեք հատվածներ. 44-օրյա պատերազմում ռազմական գործողությունների ամենաթեժ փուլը (2020թ. հոկտեմբերի 1-31), պատերազմի ավարտը և դրան անմիջապես հաջորդած ժամանակահատվածը (2020թ. նոյեմբերի 1-30), պատերազմից հետո համեմատաբար ուշ ժամանակահատվածը (2021թ. ապրիլի 1-30): Հաշվարկներն իրականացվել են ինչպես այս ժամանակային հատվածներից յուրաքանչյուրի, այնպես էլ ուսումնասիրության ամբողջ ժամանակահատվածի համար:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Այս մշտադիտարկման շրջանակում ուսումնասիրված բոլոր թեմաներից թե՛ ադրբեջանական, թե՛ հայկական լրատվամիջոցներում ամենամեծ անդրադարձը ստացել է Ղարաբաղյան 44-օրյա պատերազմի ռազմական գործողությունների ընթացքը: Թե՛ իրադարձությունների հանդեպ ուշադրության, թե՛ դրանց մեկնաբանության մեջ անհամապատասխանությունները զգալի էին, ինչը մեծապես կարող էր պայմանավորված լինել ինտերնետային ռեսուրսների արգելափակմամբ: Ընդ որում, այս հանգամանքը հատկապես դրսևորվել է 2020 թվականի հոկտեմբերի 1-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, երբ միայն մոտ 30%-ի դեպքում է ադրբեջանական ԶԼՄ-ներում պատերազմին առնչվող այս կամ այն կոնկրետ ռազմական օպերացիայի, գործողության կամ այլ իրադարձությունների նկարագրությունը համընկել մշտադիտարկման օբյեկտ հանդիսացող հայկական լրատվամիջոցներից գոնե մեկում հրապարակված նկարագրության հետ: Ընդ որում, ուսումնասիրված ադրբեջանական աղբյուրներում լուսաբանված դրվագների 70%-ից ավելին ընդհանրապես որևէ արտացոլում չի գտել հայկական ԶԼՄ-ներում: Հաջորդ ամսվա ընթացքում (նոյեմբերի 1-30, 2020թ.) համընկնման ցուցանիշն աճել է մինչև մոտ 63%: «Համապատասխանության ինդեքսի» այս աճը պայմանավորված է հայաստանյան առցանց լրատվամիջոցների կողմից պատերազմի ընթացքի պոստ-ֆակտում մեկնաբանմամբ՝ Ադրբեջանի նախագահի, Հայաստանի Հանրապետության վարչապետի և Ռուսաստանի Դաշնության նախագահի նոյեմբերի 9/10-ի հայտարարությունից հետո, երբ և՛ հասարակությունն ընդհանրապես, և՛ լրագրողները՝ մասնավորապես, զգալիորեն ավելի մեծ հետաքրքրություն դրսևորեցին իրական պատկերացում կազմելու հարցում այն իրադարձությունների մասին, որոնք կարևոր դեր էին խաղացել երկրի կյանքում: Միևնույն ժամանակ, կոնկրետ դրվագների նկատմամբ հետաքրքրության համընկնումը մնացել է մոտավորապես նույն մակարդակի վրա: «Համապատասխանության ինդեքսի» աճի միտումը շարունակվել է նաև հաջորդ ամիսներին, օրինակ՝ 2021 թվականի ապրիլին պատերազմի ընթացքի՝ միմյանցից տարբերվող մեկնաբանության դեպքերն արդեն 10%-ը չեն գերազանցում: Միևնույն ժամանակ, կոնկրետ դրվագների նկատմամբ հետաքրքրության համընկնման դինամիկան ավելի նվազ ինտենսիվ է եղել: Ուշադրության անհամապատասխանությունը դեռևս կազմել է թեմայի վերաբերյալ նյութերի գրեթե 60%-ը: Այս թվերը վկայում են այն մասին, որ հայկական և ադրբեջանական լրատվամիջոցների լսարանները գտնվում են միանգամայն տարբեր տեղեկատվական միջավայրերում, ինչը չափազանց դժվարացնում է փոխըմբռնումը և փոխշահավետ լուծումների որոնումը:

Դիտարկված հայկական լրատվամիջոցներով 2020 թվականի հոկտեմբերին կոնկրետ ռազմական իրադարձությունների լուսաբանման հետ ամենամեծ անհամապատասխանությունը գրանցվել է vesti.az-ի, նոյեմբերին՝ trend.az-ի և 2021 թվականի ապրիլին՝ report.az-ի հրապարակումներում: Մասնավորապես, ռազմական գործողությունների ընթացքի վերաբերյալ հրատապ տեղեկատվության, այդ թվում՝ կայքերի արգելափակման հետևանքով լսարանի հասանելիության սահմանափակման ցայտուն օրինակներից էր 2020թ. պատերազմի հենց առաջին օրը կորուստների մասին տեղեկատվության լիակատար անտեսումը հայկական ԶԼՄ-ների կողմից:

Արդեն սեպտեմբերի 27-ին ադրբեջանական լրատվամիջոցները հայտնել են մինչև 200 տանկի և այլ զրահատեխնիկայի, 228 հրետանային կայանքների, համազարկային

կրակի հրթիռային համակարգերի և ականանետների, 30 հակաօդային պաշտպանության համակարգերի, 6 հրամանատարական դիտակետերի, զինամթերքի 5 պահեստների, ավելի քան 110 մեքենայի և մեկ զենիթահրթիռային C-300 համակարգի ոչնչացման մասին: Եվ միայն պատերազմի ավարտից հետո այս տեղեկությունը հաստատեցին մի շարք նախկին բարձրաստիճան հայ զինվորականներ ու փորձագետներ: Օրինակ, ԼՂ բանակի նախկին հրամանատար Սամվել Բաբայանը հայտարարեց, որ այդ կորուստները կազմում էին Ղարաբաղում հայկական զինված ուժերի տրամադրության տակ գտնվող զինատեսակների 40%-ը: Հետագայում՝ պատերազմի ընթացքում, նույն պատճառով, հայ հանրության մեծամասնությունը տեղեկություն չստացավ նաև ռազմական տեխնիկայի, այդ թվում՝ ռազմական ավիացիայի ստորաբաժանումների կորուստների մասին, ինչը լայնորեն տարածվեց ադրբեջանական, թուրքական, ռուսական և այլ աղբյուրներով:

Արձանագրվել են նաև միմյանց տեղեկությունները հերքելու բազմաթիվ դեպքեր, որոնք ոչ միշտ են հասել լրատվամիջոցներին, այդ թվում՝ կայքերի արգելափակման պատճառով: Այսպես, ադրբեջանական լրատվամիջոցները 2020 թվականի հոկտեմբերի 3-ին հայտնել են Լեռնային Ղարաբաղի նախագահ Արայիկ Հարությունյանի ծանր վիրավորման մասին: Հայկական աղբյուրները կտրականապես հերքել են այդ լուրերը:

Այդօրինակ տարբերությունները բնորոշ են եղել նաև հոկտեմբերի 10-ին (Ռուսաստանի Դաշնության նախաձեռնությամբ), հոկտեմբերի 19-ին (Ֆրանսիայի նախաձեռնությամբ) և հոկտեմբերի 26-ին (ԱՄՆ-ի նախաձեռնությամբ) հրադադարի պայմանավորվածությունների խախտման պատճառների մասին տեղեկություններին: Բոլոր երեք դեպքերում էլ Ադրբեջանի և Հայաստանի ուսումնասիրված ԶԼՄ-ները հրապարակել են պայմանավորվածությունները խախտելու համար մյուս կողմին մեղադրող հաղորդագրություններ:

Որպես օրինակ, երբ ադրբեջանական և հայկական լրատվամիջոցների տեղեկությունները համընկել են, կարելի է բերել ուսումնասիրված ադրբեջանական ինտերնետային ռեսուրսների կողմից զոհված հայ զինծառայողների թվի մասին Երևանի տվյալների պարբերական հրապարակումները: Ճիշտ է, այս երևույթը նկատվել է հիմնականում 44-օրյա պատերազմի առաջին կեսին. հետագայում ադրբեջանական աղբյուրները սկսել են ավելի ակտիվորեն զուգահեռաբար տարածել հայկական զորքերի անձնակազմի կորուստների մասին սեփական տեղեկատվություն, որը տարբերվում էր Երևանի տարածածից:

Պատերազմի ընթացքի մասին հակասական արձագանքները ադրբեջանական և հայկական լրատվամիջոցներում շարունակվել են նաև նոյեմբերի 9-ի զինադադարից ամիսներ անց: Այսպես, 2021 թվականի ապրիլին ադրբեջանական տեղեկատվական տարածքում վերստին կարևորվել էր Շուշի քաղաքի համար մղվող մարտերում հայկական կողմից «Իսկանդեր» հրթիռի կիրառման թեման: Ընդ որում, Բաքուն այդ տեղեկությունը հաղորդել էր որպես անվերապահ ճշմարտություն: Երևանը, ի դեմս վարչապետի, նախկին բարձրաստիճան զինվորականների և փորձագետների, տարբեր վարկածներ էր արտահայտել այդ զինատեսակի անարդյունավետ օգտագործման վերաբերյալ: Մյուս կողմից՝ Մոսկվան մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովի շուրթերով սկզբում հերքեց «Իսկանդեր»-ի օգտագործման փաստը, իսկ հետո սահմանափակվեց մեկնաբանությամբ, որ հարցն ուսումնասիրվում է: Միաժամանակ, թեև ադրբեջանական կայքերի արգելափակումը դեռ շարունակվում էր, սակայն այս

բոլոր վարկածները տարբեր ինտենսիվությամբ և շեշտադրումներով տարածվեցին ինչպես ադրբեջանական, այնպես էլ հայկական լրատվամիջոցներում։

Ուսումնասիրված ադրբեջանական և հայկական ռեսուրսներում տարբեր ինտենսիվությամբ և շեշտադրումներով կարևորվել են նաև ականապատ դաշտերի, դրանց քարտեզների տրամադրման, պայթյուններից տուժածների և այլ թեմաներ։ Սակայն այս հարցում ևս խնդրի ներկայացման անհամապատասխանություններն առաջացել են ոչ թե կայքերի շարունակական արգելափակման, այլ տեղեկատվական առաջնահերթությունների տարբերության պատճառով։

Իրադարձությունների նկատմամբ տարբեր վերաբերմունքն առավելապես արտացոլվել է ապրիլի 12-ին Բաքվում Ռազմավարի պուրակի բացման վերաբերյալ ադրբեջանական և հայկական լրատվամիջոցների լուսաբանման մեջ։ Հետազոտված ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակումների մեծ մասում սա ներկայացվել է որպես կարևոր իրադարձություն, բարձր գնահատանքի արժանի նախաձեռնություն։ Մինչդեռ հայկական լրատվամիջոցները դրան բացառապես անդրադարձել են վրդովմունքով՝ միաժամանակ ակտիվորեն հղումներ անելով երրորդ երկրների բազմաթիվ գործիչների մեկնաբանություններին։

Երկու երկրների ուսումնասիրված լրատվամիջոցների անդրադարձների հաճախականությամբ երկրորդ տեղում հակամարտությունում արտաքին ուժերի դերն էր։ Այստեղ կոնկրետ իրադարձությունների, դրվագների նկատմամբ ուշադրության անհամապատասխանությունն ավելի փոքր չափով է դրսևորվել. մոնիտորինգի բոլոր երեք ժամանակահատվածներում այն պահպանվել է 45-60 %-ի սահմաններում։ Ինչ վերաբերում է այս իրադարձությունների մեկնաբանման անհամապատասխանությանը, ապա այն արդեն զգալիորեն ավելի քիչ է եղել, քան պատերազմի դրվագներին անդրադառնալիս (այստեղ և ստորև, հարկ է նկատի ունենալ, որ այս մշտադիտարկման շրջանակներում մեկնաբանություն կամ բնութագրում ասելով նկատի է առնվում միայն այս կամ այն փաստերի օգտագործումը, այլ ոչ թե դրանց նկատմամբ վերաբերմունքը, տարբեր կարծիքներն ու մեկնաբանությունները)։ Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տեղեկատվության արտաքին աղբյուրները մոտավորապես հավասար չափով են ազդել ադրբեջանական և հայկական մեդիայի վրա։ Հայկական և ադրբեջանական լրատվամիջոցների լսարանները, թեև գտնվում է հաղորդակցման տարբեր միջավայրերում, բայց, փաստացիորեն, բավականին նման տեղեկատվություն են ստանում արտաքին ուժերի դերի վերաբերյալ։ Իսկ այս թեմայի շրջանակներում ինտերնետ ռեսուրսների արգելափակումն առանձնապես դեր չի խաղում։

Արտաքին ուժերի թեմայի վերաբերյալ ուշադրության հարցում հայկական լրատվամիջոցների հետ ամենաբարձր «անհամապատասխանության/ ինդեքսը» գրանցել են day.az-ը և media.az-ը, իսկ ամենաքիչը՝ trend.az-ը։ Որոշակի չափով այս անուղղակի ցուցանիշը (տե՛ս աղյուսակները) հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ լրատվամիջոցի բովանդակության մեջ քարոզչական և զուտ տեղեկատվական բաղադրիչների հարաբերակցության մասին։ Սակայն այս մշտադիտարկման առարկան դա չի եղել։

Ադրբեջանի և Հայաստանի ուսումնասիրված լրատվամիջոցներում արտաքին ուժերի դերի լուսաբանման միանգամից մի քանի ասպեկտներում որոշակի միտումնավորություն է դրսևորվել։ Ադրբեջանական ռեսուրսները մեծ նշանակություն

են տվել 2020 թվականի նոյեմբերին 44-օրյա պատերազմում իրենց հաղթանակի միջազգային ճանաչման և հավանության դրսևորումներին: Այդ էր պատճառը, որ նրանք հետևողականորեն լուսաբանում էին օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հավանության հայտարարությունները նոյեմբերի 9-ին Ադրբեջանի Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության ղեկավարների կողմից ստորագրված համաձայնագրերի վերաբերյալ՝ դրանք դիտարկելով որպես Ղարաբաղյան հիմնախնդրի ռազմական լուծման աջակցություն:

Մինչդեռ հայկական լրատվամիջոցները հաճախ շրջանցում էին նման հայտարարությունները՝ մեծ հետաքրքրություն ցուցաբերելով պատերազմի պատճառով առաջացած խնդիրների վերաբերյալ դրսից հնչող հայտարարությունների նկատմամբ, որոնք իրենց հերթին լայն լուսաբանում չստացան Ադրբեջանում: Արդյունքում՝ կայքերի արգելափակումն ազդեց լսարանի կողմից կատարվածի վերաբերյալ արտաքին արձագանքների բնույթի ամբողջական ընկալման վրա:

Արտաքին գործոններից ադրբեջանական լրատվամիջոցները հատուկ ուշադրություն են դարձրել Թուրքիայի դերին և 44-օրյա պատերազմից հետո Բաքվի և Անկարայի համագործակցության հետագա ամրապնդմանը քաղաքական, ռազմական, տեղեկատվական, մշակութային, կրթական և այլ ոլորտներում: Սակայն այն փաստը, որ հայկական լրատվամիջոցները սահմանափակ հետաքրքրություն ունեին այս թեմայի հանդեպ, հազիվ թե խանգարեց տեղի լսարանին՝ համարժեք գնահատել Ադրբեջանի և Թուրքիայի միջև մտերմության աստիճանը: Իսկ կայքերի արգելափակումն այս հարցում էական դեր չխաղաց:

Մշտադիտարկողների խումբը նվազ արմատական անհամապատասխանություն է արձանագրել «Հակամարտության շուրջ դիվանագիտական գործընթացները» թեմայով իրադարձությունների առնչությամբ երկու երկրների ԶԼՄ-ներում տարածված տեղեկատվության հարցում, որը, պարզվեց, երրորդն է լուսաբանման ինտենսիվության առումով: Այստեղ անհամապատասխանությունը մշտադիտարկման բոլոր երեք ժամանակահատվածներում պահպանվել է 35-40%-ի սահմաններում: Ինչ վերաբերում է իրադարձությունների մեկնաբանման անհամապատասխանություններին, ապա դրանք գրեթե բացակայում էին: Երկրորդ և երրորդ փուլերում դրանք ընդհանրապես չեն արձանագրվել: Այս ցուցանիշները վկայում են այն մասին, որ ինչպես ադրբեջանական, այնպես էլ հայկական առցանց լրատվամիջոցներն առաջնորդվել են տեղեկատվության նույն աղբյուրներով: Ահա թե ինչու լսարանի իրազեկվածության վրա կայքերի արգելափակման բացասական ազդեցությունն ավելի թույլ էր:

Այս թեմայով հայկական մեդիա ռեսուրսների անդրադարձների հետ ամենաբարձր «անհամապատասխանության ինդեքսն» ունեն ադրբեջանական լրատվամիջոցներից vesti.az-ը և media.az-ը: Մնացածի համար այս ցուցանիշը մոտավորապես նույնն է: Միևնույն ժամանակ, մշտադիտարկման առաջին (ռազմական գործողությունների թեժ շրջան) և երրորդ (պատերազմի ավարտից մի քանի ամիս անց) փուլերում ամենաբարձր «անհամապատասխանության ինդեքսը» արձանագրվել է media.az-ի, իսկ երկրորդ փուլում (պատերազմի վերջին օրերը և հաջորդող ժամանակաշրջանը)՝ vesti.az-ի մոտ:

Անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, որը դե-յուրե մնում է կարգավորման հիմնական ձևաչափը, ադրբեջանական և հայկական լրատվամիջոցները

տարբեր կերպ են ձևակերպել իրենց ակնկալիքները ՄԽ միջնորդական դերից։ Ադրբեջանում ակնկալում էին, որ համանախագահները ջանքեր կգործադրեն «տարածաշրջանում պատերազմից հետո խաղաղ կյանք հաստատելու համար», իսկ Հայաստանում հույս ունեին, որ Մինսկի խումբը կակտիվացնի իր գործունեությունը Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հստակեցման հարցում։ Այնուամենայնիվ, նույնիսկ այս դեպքում դժվար է ասել, որ կայքերի արգելափակումն էական ազդեցություն է ունեցել լսարանի հիմնավոր տեսակետների ձևավորման վրա, քանի որ ՄԽ-ն ինքը դեռ չի հստակեցրել 44-օրյա պատերազմից հետո իր միջնորդական առաքելության առաջնահերթությունները։

Մշտադիտարկման տարբեր ժամանակահատվածներում ռազմագերիների թեմայի լուսաբանումն արմատապես տարբերվել է։ Եթե 2020 թվականի հոկտեմբերին, երբ ռազմական թեժ գործողություններ էին ընթանում, ուսումնասիրված ադրբեջանական և հայկական լրատվամիջոցներում տարբեր դրվագների և իրադարձությունների նկատմամբ վերաբերմունքի անհամապատասխանությունն արձանագրվել է դեպքերի կեսից ավելիում, ապա 2020 թվականի նոյեմբերի 1-ից 30-ն ընկած ժամանակահատվածում, որի մեծ մասը վերաբերում էր իրավիճակի հետպատերազմյան զարգացմանը, երբ ռազմագերիների թեման առանձնակի արդիականություն ձեռք բերեց, անհամապատասխանությունն առկա էր դեպքերի լուսաբանումների ավելի քան երեք քառորդում։ Իսկ 2021 թվականի ապրիլին այս ցուցանիշն էապես փոխվել է, և անհամապատասխանությունն արձանագրվել է իրադարձությունների միայն մեկ քառորդից մի փոքր ավելին կազմող լուսաբանումներում։ Ճիշտ է, այս թեմայի լուսաբանումն արտացոլող թվերը համեմատաբար փոքր են, և բավականին դժվար է դատել օրինաչափությունների և միտումների մասին։ Հստակ կարելի է նշել միայն մեկ հանգամանք. երկու երկրների լսարաններին ռազմագերիների՝ հիմնականում ադրբեջանական կողմից գերեվարված լինելու պատճառով, հետաքրքրում էին ռազմագերիների և այլ պահվող անձանց խնդրի տարբեր կողմերը։ Դրանում որոշակի դեր կարող էր խաղալ ինտերնետ ռեսուրսների արգելափակումը, հատկապես ակտիվ ռազմական գործողությունների ժամանակաշրջանում, երբ լրատվամիջոցների կողմից օգտագործվող տեղեկատվության աղբյուրները զգալիորեն տարբերվում էին։ Հետագայում լրատվամիջոցները հնարավորություններ գտան բավարարելու իրենց և հանդիսատեսի բազմազան հետաքրքրություններն այս թեմայով։

Ադրբեջանական լրատվամիջոցները ռազմագերիների թեմային հատուկ ուշադրություն են դարձրել 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության ստորագրումից անմիջապես հետո: Ինչպես 44-օրյա պատերազմին նախորդող տարիներին, նրանց ուշադրության կենտրոնում ՌԴ քաղաքացի Դիլգամ Ասքրովը և Ադրբեջանի քաղաքացի Շահբազ Գուլիևն էին, որոնք 2014թ. հուլիսին, ըստ ադրբեջանական վարկածի, գտնվել էին Հայաստանի կողմից վերահսկվող Քելբաջարի շրջանում՝ այցելելու իրենց հարազատների շիրիմներին, և պատանդ էին վերցվել։ Ըստ հայկական վարկածի՝ նրանք դիվերսանտներ են եղել, սպանել են իրենց նկատած հայ տղային, գերի են ընկել և ԼՂ դատարանի կողմից դատապարտվել 22 տարվա ազատազրկման։ Ուստի, հետպատերազմյան ռազմագերիների փոխանակման շրջանակներում այս երկու անձանց հանձնումն ադրբեջանական կողմին՝ մեծ ոգևորություն առաջացրեց Ադրբեջանում։ Հայ հանրության շրջանում և լրատվամիջոցներում դատապարտյալների հանձնումը մեծ մասամբ ընկալվեց որպես անընդունելի զիջում։

Այն բանից հետո, երբ ադրբեջանական կողմը ստացավ իր բոլոր ռազմագերիներին և, առաջին հերթին, Դիլգամ Ասքերովին և Շահբազ Գուլիևին, այդ երկրի լրատվամիջոցները հիմնականում կորցրեցին հետաքրքրությունը թեմայի նկատմամբ, մինչդեռ հայկական ԶԼՄ-ների և հանրության համար՝ Ադրբեջանի կողմից գերեվարված հայ զինվորականների և քաղաքացիական անձանց շարունակվող կալանքի տակ պահելու պատճառով հարցը մնում է ամենաարդիականներից մեկը: Իսկ թեմայի լուսաբանման այս անհամապատասխանությունը, ինչպես վերը նշվեց, սոսկ աննշան չափով է պայմանավորված է կայքերի արգելափակմամբ:

Մոտավորապես նույնը կարելի է ասել խաղաղապահ զորակազմի տեղակայման և կարգավիճակի լուսաբանման, ինչպես նաև տրանսպորտային հաղորդակցության ուղիների ապաշրջափակման մասին, միայն այն տարբերությամբ, որ 2020 թվականի հոկտեմբերին այդ հարցերը դեռևս արդիական չեն եղել և կամ ընդհանրապես չեն շոշափվել, կամ էլ արժանացել են նվազագույն ուշադրության: Ռուս խաղաղապահների թեման հատկապես ակտիվացել է դիտարկման երկրորդ փուլում (2020թ. նոյեմբերի 1-30), իսկ տրանսպորտային հաղորդակցության ուղիների բացման հեռանկարները՝ երրորդ փուլում (2020թ. ապրիլի 1-30), երբ այդ հարցով հայ-ադրբեջանա-ռուսական եռակողմ հանձնաժողովն արդեն աշխատում էր: Ուսումնասիրված վերջին երկու ժամանակահատվածներում համապատասխան դրվագների և իրադարձությունների մեկնաբանությունները կա՛մ ամբողջությամբ, կա՛մ դեպքերի ճնշող մեծամասնության դեպքում համընկել են: Սա վկայում է այն մասին, որ, անկախ արգելափակումից, և՛ ադրբեջանական, և՛ հայկական լրատվամիջոցներն օգտագործել են ընդհանուր աղբյուրներ, այդ թվում՝ երկու երկրներից դուրս գտնվող, ինչպես նաև այն, որ ադրբեջանական և հայկական աղբյուրների կողմից այս թեմայի վերաբերյալ «մերկ փաստերի» ներկայացումը սկզբունքորեն չի տարբերվել: Իսկ անհամապատասխանությունները վերաբերել են միայն դրվագների ու իրադարձությունների գնահատմանը:

Ադրբեջանական և հայկական ԶԼՄ-ների կողմից տրանսպորտային հաղորդակցության թեմայի լուսաբանման տարբերություններից մեկը այսպես կոչված «Մեղրու միջանցքի» նկատմամբ ուշադրության աստիճանն ու բնույթն է: Ադրբեջանում այն ներկայացվել է որպես գլխավոր ձեռքբերումներից մեկը, որին հասել է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը 2020 թվականի նոյեմբերի 9-ի հայտարարության շուրջ բանակցությունների ընթացքում:

Հայաստանում Հայտարարության այս կետը շատերի կողմից դիտվում է որպես երկրի տարածքային ամբողջականության և ինքնիշխանության սպառնալիք: Ընդհանրապես, կարելի է ասել, որ ադրբեջանական լրատվամիջոցներն ու պաշտոնյաները ավելի շատ, քան հայկականները, հակված են բարձրաձայնելու բանակցային գործընթացի մանրամասները, որոնք դեռևս լիովին հասկացված չեն հայաստանյան հասարակության կողմից: Այստեղից էլ ի հայտ են գալիս դավադրության ամենատարբեր տեսություններ, որոնք նույնպես որոշ չափով կայքերի արգելափակման հետևանք են:

Մշտադիտարկման երկրորդ փուլում (2020թ. նոյեմբերի 1-30) ադրբեջանական լրատվամիջոցները բավական ինտենսիվ քննարկում էին Լեռնային Ղարաբաղում խաղաղապահ առաքելությանը Թուրքիայի ակտիվ ներգրավման հնարավորությունը: Նույնիսկ եղան ենթադրություններ, որ այս առաքելությունը լինելու է համատեղ՝ ռուս-թուրքական: Այս կարգի հրապարակումները դադարեցին միայն ռուս-թուրքական

մոնիտորինգային կենտրոնի ստեղծումից հետո, ինչը նշանակում էր Անկարայի բավականին սահմանափակ պաշտոնական կարգավիճակ տարածաշրջանում խաղաղության պահպանման գործընթացում: Բայց թեման, մնալով արդիական, հայկական տեղեկատվական տարածքում դրսևորվեց շատ սահմանափակ ծավալի մեջ, ինչը նույնպես որոշ չափով կարելի է համարել կայքերի արգելափակման հետևանք:

Այդպես նաև ադրբեջանական լրատվամիջոցները, ի տարբերություն հայկականի, բազմաթիվ մանրամասներ են հաղորդել ռուս խաղաղապահների տեղակայման գործընթացի, նրանց սպառազինության, նյութատեխնիկական հագեցվածության և ենթադրվող՝ ոչ պաշտոնական մանդատի մասին: Սակայն այստեղ նման տեղեկատվության նկատմամբ հետաքրքրվածության տարբերությունը պայմանավորված է ոչ թե ադրբեջանական կայքերի արգելափակմամբ, որոնք այդ ինֆորմացիան իրենք են գտել՝ հիմնականում ռուսական աղբյուրներում, այլ այն հանգամանքով, որ հայ հանրությանը ավելի շատ հետաքրքրում էր սոսկ ռուսական խաղաղապահների առկայության փաստը, քան դրա հետ կապված մանրամասները:

Սահմանամերձ շրջանների թեման այս ուսումնասիրության մեջ շատ մակերեսորեն է արտացոլված, քանի որ մշտադիտարկման մեթոդաբանությունը հիմնված է եղել ադրբեջանական հինգ լրատվամիջոցների հրապարակումների և հայկական հինգ լրատվամիջոցներում դրանց առնչվող փաստերի հանդեպ ուշադրության և դրանց մեկնաբանման համընկնումների վրա: Եվ քանի որ, ի տարբերություն հայկականի, ադրբեջանական լրատվամիջոցները շատ հազվադեպ էին անդրադառնում սահմանամերձ տարածքների թեմային, դժվար է խոսել աղբյուրների օգտագործման տարբերությունների և լսարանին տեղեկացնելու հարցում ինտերնետային ռեսուրսների արգելափակման դերի մասին: Միևնույն ժամանակ, մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տվյալների հիման վրա կարելի է ասել, որ ի տարբերություն հետազոտության համար ընտրված այլ թեմաների, աղբյուրներն օբյեկտիվորեն չէին կարող ընդհանուր լինել և դրանց միջոցով ստացված տվյալները չէին կարող համընկնել: Ե՛վ հայկական, և՛ ադրբեջանական լրատվամիջոցները սահմանամերձ շրջանների խնդրին անդրադարձել են յուրաքանչյուրն իր տեսանկյունից: Եվ հաշվի առնելով երկու լսարանների համար թեմայի էականորեն տարբերվող նշանակությունը, որը պայմանավորված է հետպատերազմյան տարածքային իրողություններով, հայկական լրատվամիջոցները թեմայի լուսաբանմանը մոտեցել են շատ ավելի մեծ հետաքրքրությամբ ու մանրակրկիտությամբ: Ըստ այդմ՝ ադրբեջանական ինտերնետային ռեսուրսների արգելափակումը չէր կարող էական դեր խաղալ հայկական լրատվամիջոցներում թեմայի լուսաբանման համար:

Ինչպես 2020 թվականի հոկտեմբերին հրադադարի նախաձեռնությունների դեպքում, կողմերը միմյանց են մեղադրում սահմանին ժամանակ առ ժամանակ ծագող լարվածության օջախների համար: Եվ սա, իհարկե, նույնպես կապված է ոչ թե կայքերի արգելափակման, այլ պաշտոնական քարոզչության առաջնահերթությունների հետ:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով այս փուլում ադրբեջանա-հայկական հարաբերություններին առնչվող թեմաների ողջ շրջանակի լուսաբանումը, մշտադիտարկման արդյունքները թույլ են տալիս եզրակացնել, որ մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ հրապարակումներում ադրբեջանական և հայկական ԶԼՄ-ներն էականորեն տարբեր իրադարձությունների, փաստերի և դրվագների են

անդրադարձել: Եվ այս առումով ինտերնետային ռեսուրսների արգելափակումը հանգեցրել է լսարանի սահմանափակ տեղեկացվածության և իրականության միակողմանի ընկալման: Ինչպես ցույց են տալիս մշտադիտարկման արդյունքները, դա առաջին հերթին վերաբերել է հետազոտության հիմնական թեմաներից մեկի՝ 44-օրյա պատերազմի ռազմական գործողությունների ընթացքին:

ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ ԱՌԱՋՆԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԸ

	1. Պատերազմի ընթացքը									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղբր. նյութեր) Ընդհանուր (աղբր. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբր. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբր. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	557	6	99	216	32	17	39	12	1
		452 (81.1%)	**105**		**167 (77.3%)**	**49**		**26 (66.7%)**	**13**	
2.	**media.az**	330	40	58	108	21	8	11	4	1
		232 (70.3%)	**98**		**79 (73.1%)**	**29**		**6 (54.5%)**	**5**	
3.	**day.az**	304	33	60	116	34	12	17	6	1
		211 (69.4%)	**93**		**70 (60.3%)**	**46**		**10 (58.8%)**	**7**	
4.	**report.az**	396	20	93	141	29	20	5	4	0
		283 (71.5%)	**113**		**92 (65.2%)**	**49**		**1 (20%)**	**4**	
5.	**trend.az**	313	22	90	97	6	20	1	1	0
		201 (64.2%)	**112**		**71 (73.2%)**	**26**		**0 (100%)**	**1**	
	Ընդամենը՝	**1900**	**121**	**400**	**678**	**122**	**77**	**73**	**27**	**3**
		1379 (72.6%)	**521**		**479 (70.6%)**	**199**		**43 (58.9%)**	**30**	

	2. Դիվանագիտական գործընթացը ԼՂ շուրջ (հայտարարություններ, անդրադարձ խնդրի կարգավորման ձեւաչափերին եւ լուծման հնարավորություններին)									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղրբ. նյութեր) Ընդհանուր (աղրբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	55	30	2	60	26	0	9	7	0
		23 (41.8%)	**32**		**34 (56.7%)**	**26**		**2 (22.2%)**	**7**	
2.	**media.az**	70	31	0	40	31	0	12	6	0
		39 (55.7%)	**31**		**9 (22.5%)**	**31**		**6 (50%)**	**6**	
3.	**day.az**	58	35	1	35	28	0	8	5	0
		22 (37.9%)	**36**		**7 (20%)**	**28**		**3 (37.5%)**	**5**	
4.	**report.az**	84	49	3	47	34	0	21	13	0
		32 (38.1%)	**52**		**13 (27.6%)**	**34**		**8 (38.1%)**	**13**	
5.	**trend.az**	82	58	0	43	29	0	11	7	0
		24 (29.3%)	**58**		**14 (32.6%)**	**29**		**4 (36.4%)**	**7**	
	Ընդամենը՝	**349**	**203**	**6**	**225**	**148**	**0**	**61**	**38**	**0**
		140 (40.1%)	**209**		**77 (34.2%)**	**148**		**23 (37.7%)**	**38**	

	3. Ռազմագերիների եւ այլ պահվող անձանց հարցեր									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղբբ. նյութեր) Ընդհանուր (աղբբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	10	0	3	6	0	0	3	1	0
		7 (70%)	**3**		**0 (0%)**	**0**		**2 (66.7%)**	**1**	
2.	**media.az**	4	2	1	2	0	0	4	3	0
		1 (25%)	**3**		**0 (0%)**	**0**		**1 (25%)**	**3**	
3.	**day.az**	8	1	4	10	4	0	4	4	0
		3 (37.5%)	**5**		**6 (60%)**	**4**		**0 (100%)**	**4**	
4.	**report.az**	10	6	1	8	2	0	9	7	0
		3 (30%)	**7**		**6 (75%)**	**2**		**2 (22.2%)**	**7**	
5.	**trend.az**	6	2	1	5	1	0	2	1	0
		3 (50%)	**3**		**4 (80%)**	**1**		**1 (50%)**	**1**	
	Ընդամենը՝	**38**	**11**	**10**	**31**	**7**	**0**	**22**	**16**	**0**
		17 (44.7%)	**21**		**24 (77.4%)**	**7**		**6 (27.3%)**	**16**	

	4. Տրանսպորտային հաղորդակցությունների բացման հեռանկարները									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղբբ. նյութեր) Ընդհանուր (աղբբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	5	0	0	1	0	0	2	0	0
		0 (0%)	**0**		**0 (0%)**	**0**		**0 (0%)**	**0**	
2.	**media.az**	0	0	0	8	1	0	7	6	0
		0 (0%)	**0**		**7 (87.5%)**	**1**		**1 (14.3%)**	**6**	
3.	**day.az**	0	0	0	4	1	0	4	3	0
		0 (0%)	**0**		**3 (75%)**	**1**		**1 (25%)**	**3**	
4.	**report.az**	0	0	0	4	3	0	8	7	0
		0 (0%)	**0**		**1 (25%)**	**3**		**1 (12.5%)**	**7**	
5.	**trend.az**	0	0	0	2	0	0	4	3	0
		0 (0%)	**0**		**0 (0%)**	**0**		**1 (25%)**	**3**	
	Ընդամենը՝	**5**	**0**	**0**	**19**	**5**	**0**	**25**	**19**	**0**
		0 (0%)	**0**		**14 (73.7%)**	**5**		**6 (24%)**	**19**	

	5. Խաղաղապահների գործունեությունը եւ կարգավիճակը									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղրբ. նյութեր) Ընդհանուր (աղրբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	0	0	0	43	25	3	8	2	0
		0 (0%)	**0**		**15 (34.9%)**	**28**		**6 (75%)**	**2**	
2.	**media.az**	2	2	0	56	50	0	0	0	0
		0 (100%)	**2**		**6 (10.7%)**	**50**		**0 (0%)**	**0**	
3.	**day.az**	4	3	0	61	53	0	2	1	1
		1 (25%)	**3**		**8 (13.1%)**	**53**		**0 (100%)**	**2**	
4.	**report.az**	1	1	0	35	30	0	3	3	0
		0 (100%)	**1**		**5 (14.3%)**	**30**		**0 (100%)**	**3**	
5.	**trend.az**	1	1	0	17	14	0	0	0	0
		0 (100%)	**1**		**3 (17.6%)**	**14**		**0 (0%)**	**0**	
	Ընդամենը՝	**8**	**7**	**0**	**212**	**172**	**3**	**13**	**6**	**1**
		1 (12.5%)	**7**		**37 (17.4%)**	**175**		**6 (0.5%)**	**7**	

	6. Արտաքին ուժերի միջամտությունը եւ դերը, վարձկանների թեման									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (աղբբ. նյութեր) Ընդհանուր (աղբբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (աղբբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	132	46	12	93	38	1	18	9	0
		74 (56.1%)	**58**		**54 (58.1%)**	**39**		**9 (50%)**	**9**	
2.	**media.az**	106	31	7	81	37	2	10	3	0
		68 (64.2%)	**38**		**42 (51.8%)**	**39**		**7 (70%)**	**3**	
3.	**day.az**	92	27	6	81	47	0	17	3	1
		59 (64.1%)	**33**		**34 (42%)**	**47**		**13 (76.5%)**	**4**	
4.	**report.az**	67	30	6	35	23	1	3	2	0
		31 (46.3%)	**36**		**11 (31.4%)**	**24**		**1 (33.3%)**	**2**	
5.	**trend.az**	44	20	7	31	23	0	4	3	0
		17 (38.6%)	**27**		**8 (25.8%)**	**23**		**1 (25%)**	**3**	
	Ընդամենը՝	**441**	**154**	**38**	**321**	**168**	**4**	**52**	**20**	**1**
		249 (56.5%)	**192**		**149 (46.4%)**	**172**		**31 (59.6%)**	**21**	

	7. Լարվածությունը եւ բախումները սահմանամերձ գոտիներում									
N.	ԶԼՄ	Հոկտեմբերի 1-31, 2020թ.			Նոյեմբերի 1-30, 2020թ.			Ապրիլի 1-30, 2021թ.		
		Ընդհանուր (ադրբ. նյութեր) Ընդհանուր (ադրբ. նյութեր)/ հայկ. կայքերում անդրադարձի բացակայության %	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (ադրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)	Ընդհանուր (ադրբ. նյութեր)	Համընկնում է (5 հայկ. կայք)	Չի համընկնում (5 հայկ. կայք)
1.	**vesti.az**	0	0	0	0	0	0	2	0	0
		0 (0%)	**0**		**0 (0%)**	**0**		**0 (100%)**	**0**	
2.	**media.az**	0	0	0	1	1	0	4	0	2
		0 (0%)	**0**		**0 (100%)**	**1**		**2 (50%)**	**2**	
3.	**day.az**	0	0	0	0	0	0	1	0	1
		0 (0%)	**0**		**0 (0%)**	**0**		**0 (100%)**	**1**	
4.	**report.az**	0	0	0	1	1	0	1	1	0
		0 (0%)	**0**		**0 (100%)**	**1**		**0 (100%)**	**1**	
5.	**trend.az**	0	0	0	0	0	0	0	0	0
		0 (0%)	**0**		**0 (0%)**	**0**		**0 (0%)**	**0**	
	Ընդամենը՝	**0**	**0**	**0**	**2**	**2**	**0**	**8**	**1**	**3**
		0 (0%)	**0**		**0 (100%)**	**2**		**4 (50%)**	**4**	

ԵՐԵՎԱՆԻ ՄԱՄՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ

www.ypc.am